



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Կենսաբանություն

Թեմա՝ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՐՈՇ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Կատարող՝ թ. 140 հիմնական դպրոցի ուսուցչուհի Լ. Մ. Իվանյան

Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար՝ Կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Խ. Պիպոյան

Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1. Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաները.....5

1.1. Ուսուցման մոդելները, տեսակները և նպատակները.....5

1.2. Ինտերակտիվ տեխնոլոգիաների կազմակերպման
առանձնահատկությունները.....7

Գլուխ 2. Ինտերակտիվ մեթոդը և դրա կիրառումը
կենսաբանության դասերին.....8

2.1. Ինտերակտիվ դաս, դրա պահանջներն
ու առանձնահատկությունները.....8

Գլուխ 3. Հետազոտական աշխատանք.....9

Եզրակացություն.....12

Օգտագործված գրականության ցանկ.....13

Ներածություն

Կրթությունը հասարակության զարգացման, պետության կայացման և ուժեղ անհատների ձևավորման հիմնական ու կարևորագույն ուղին է: Այն տարբեր ժամանակներում ու տարբեր մշակույթներում տարբեր կերպար է ունեցել: Այսօր էլ աշխարհի տարբեր երկրներում կիրառվում են տարբեր մոդելներ, որոնք երբեմն իրարից կտրուկ տարբերվում են:

Հայկական կրթական միջավայրում դեռ շարունակում է գերակայել խորհրդային դպրոցի ոճը, համաձայն որի՝ ուսուցիչը կոնկրետ հաստատված ծրագրով, դասագրքի տեսքերով և օժանդակ նյութերի օգնությամբ ներկայացնում է թեման, պահանջելով, որ աշակերտը նույն կերպ սովորի և «վերադարձնի»:

«Ինտերակտիվ որոշ մեթոդների կիրառումը կենսաբանության դասերին» վերնագրով հետազոտական աաշխատանքի մեջ հիմնականում ներկայացնում են սեփական փորձով ստացած արդյուքները: Խոսելու են դրական ու բացասական կողմերի մասին: Առանձին բաժնով անդրադառնում են պետական ծրագրին և տարբեր դրպոցներում կիրառվող փորձին:




Կենսաբանությունը օգնում է

- Բացահայտել թևուղիք և կյանքը
- Անվերջ առողջ սնվել
- Իսկական կենդանիներին
- Առաջին օգնությունը յուրյ փայ
- Իրոք փանելը նրկիր Տղորակի Տաաին

Գլուխ 1.

Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաները

1.1 Ուսուցման մոդելները, տեսակները և նպատակները



Ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը՝ պասիվ (էքստրակտիվ ռեժիմ), ակտիվ (ինտրակտիվ ռեժիմ), ինտերակտիվ (ինտերակտիվ ռեժիմ):

Պասիվ մոդելով ուսուցանման դեպքում աշակերտները յուրացնում են նյութը ուսուցչի խոսքից կամ դասագրքի տեքստից, չեն շփվում միմյանց հետ և չեն կատարում ոչ մի ստեղծագործական առաջադրանք: Այսպիսի մոդելի օրինակներ են դասերի ավանդական ձևերը:

Ակտիվ մոդելը խթանում է սովորողների իմացական գործունեությունը և ինքնուրույնությունը: Այս մոդելն ունի ստեղծագործական առաջադրանքների առկայությունը և պարտադիր շփումը աշակերտ-ուսուցիչ համակարգում: Այս մոդելի թերությունն այն է, որ սովորողները հանդես են գալիս որպես ուսուցման սուբյեկտ միայն իրենց համար և կրթական գործընթացում փոխգործակցում են լոկ ուսուցչի հետ:

Ինտերակտիվ մոդելն իր առջև նպատակ է դնում կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն՝ հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության:

Ինտերակտիվ են այն տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտիվ-

օբյեկտիվ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը:

1.2. Ինտերակտիվ տեխնոլոգիաների կազմակերպման առանձնահատկությունները

Դասակարգման բնութագիչները

- Իմաստասիրական հիմքը՝ հումանիստական:
- Մեթոդաբանական մոտեցումը՝ հաղորդակցական:
- Զարգացման առաջատար գործոնները՝ սոցիոծին:
- Ուսումնա-դաստիարակչական գործընթացի կառավարման տեսակը՝ ուղեկցում:

• Ուսումնա-դաստիարակչական գործընթացի կառավարման տիպը՝ փոխուսուցում:

- Գերակշռող մեթոդները՝ տրամախոսական:
- Կազմակերպչական ձևերը՝ ցանկացած:
- Մոտեցումը երեխային և դաստիարակչական փոխազդեցության բնույթը՝ ինտերակտիվ:

Նպատակային կողմնորոշումները

- Մովորողների անհատական մտային գործընթացների ակտիվացում:
 - Մովորողի մեջ ներքին երկխոսության հարուցում:
 - Փոխանակման առարկա տեղեկատվության ըմբռնման ապահովում:
 - Մանկավարժական փոխգործակցության անհատականացում:
- Ուսուցչի կարևորագույն խնդիրը ֆասիլիտացիան է՝ օգնություն տեղեկությունների փոխանակման

գործընթացում՝

- Տեսակետների բազմազանության բացահայտում:
- Մասնակիցների անձնական փորձի օգտագործում:
- Մովորողների ակտիվության աջակցում:
- Տեսության և պրակտիկայի միավորում:
- Մասնակիցների փորձի փոխհարստացում:
- Մասնակիցների ստեղծագործականության խրախուսում:

Գլուխ 2.

Ինտերակտիվ մեթոդը և դրա կիրառումը կենսաբանության դասերին Ինտերակտիվ դաս, դրա պահանջներն ու առաձևահատկությունները

Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթություն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, թարմացում, կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում են հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում:

«Ինտերակտիվ» բառը թարգմանաբար նշանակում է «համագործուն դաս կամ միջգործունեություն»: Ինտերակտիվ դասի օրինակ կարող է լինել դասարանական ակտիվ քննարկումը, բանավեճը, խաղը: Նմանօրինակ դասերը սովորողների մոտ ստեղծում են մոտիվացիա՝ ցանկություն առաջացնելով ընթերցելու, լսելու, հասկանալու և, ամենակարևորը՝ խոսելու համար: Պատանեկան շրջանում երեխաների համար կարևոր է սեփական կարծիքն ու տեսակետն արտահայտելու հարթակ ունենալը, իրենց տարեկիցների կարծիքները լսելն ու դրանք ուսուցչի հետ քննարկելը: Մեր օրերում սա իսկապես մի հզոր մոտիվացնող գործիք է, որը պետք է կիրառել: Սակայն այն նաև չի կարելի արժեզրկել՝ հաճախ և չափից շատ կիրառելով, քանի որ այն կկորցնի իր գրավչությունն ու հետաքրքրությունը:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդները նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությանը:

Ինտերակտիվ դասերը կիրառելի են դառնում այնպիսի դասարաններում, որտեղ աշակերտների կենսաբանության իմացությունը տարբեր մակարդակների վրա է: Ինտերակտիվ դասը կարելի է իրականացնել նաև առանց որևէ տեխնիկական միջոց կիրառելու, որտի դեպքում դասավանդողից և սովորողից շատ ժամանակ ու ջանք է պահանջվում:

Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաները խնայում են ժամանակը՝ թույլ տալով նախօրոք պատրաստվել:

Գլուխ 3. Հետազոտական աշխատանք

«Խմբային աշխատանք»-ի մեթոդ

8-րդ դասարան, աշակերտների թիվը՝ 15

Թեմա՝ Արյան պաշտպանական դերը: Իմունիտետ:

Դասի նպատակը.

Աշակերտը կիմանա՝

- Արյան պաշտպանական դերի,
- Իմունիտետի և նրա տեսակների,
- Բուժիչ շիճուկների,
- ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի մասին, դրանց փոխանցման ուղիների և հետևանքների մասին:

Կկարողանա՝

- Համեմատել պասիվ և ակտիվ իմունիտետները,
- Բացատրել հակամարմինների ազդեցությունը, որպես պաշտպանական հարմարանքներ,
- Տարբերակել պատվաստանյութի և բուժիչ շիճուկների ազդեցությունը օրգանիզմի վրա,
- Տարբերակել իմունիտետի տեսակները:

Կարժևորի

- Առողջ ապրելակերպը և պատասխանատու վարքագիծը,
- ՄԻԱՎ, ՁԻԱՀ-ի կանխարգելման անհրաժեշտությունը:

Դասի ընթացքը.

Դասարանը բաժանել 3 խմբի.

Կատարել անդրադարձ, նախորդ դասերի հանձնարարականներին:

Խթանման փուլ

Ուսուցիչը պատմում է, որ 18-րդ դարում անգլիացի բժիշկ Ջենները նկատել էր, որ կրթվորուհիները չեն հիվանդանում ծաղիկ հիվանդությամբ, թեև շփվում էին հիվանդ


մարդկանց հետ: Ինչու՞: Երեք խմբերի առաջարկած պատասխանները գրի է առնվում գրատախտակին:


Իմաստի ընկալման փուլ՝ մեթոդ «Համակցված դասախոսություն», ուսուցիչը ներկայացնում է «Արյան պաշտպանական ռեակցիան» հատվածը՝ օգտագործելով համապատասխան պատտառներ: Աշակերտները ծանոթանալով նյութին, լրացնում են հանձնարարված աղյուսակը և ներկայացնում ըստ խմբերի

Օրգանիզմի համապատասխան մասը և հեղուկները	Դերը օրգանիզմի պաշտպանության համար
Մաշկ	
Արյուն	
Հյուսվածքային հեղուկ	
Ավիշ	

Աղյուսակ 1. Օրգանիզմի պաշտպանական հարմարանքները

Ուսուցիչը բացատրում է իմունիտետ հատվածը, խմբերին հանձնարարելով ծանոթանալ նյութի բովանդակությանը, լրացնելով հաջորդ գծապատկերը:





Խմբերը ներկայացրեցին իրենց գծապատկերները և պատասխանեցին հետևյալ հարցերին, ի՞նչ է բուժիչ շիճուկը, ինչպե՞ս է այն ստացվում, որպես հուշում օգտվելով ցուցապաստառից:

Քննարկելով խմբերի ներկայացրած արդյունքները, ուսուցիչը ներկայացրեց «իմունային անբավարարություն» բաժինը և հանձնարարեց խմբերին պատասխանել հետևյալ հարցերին.

- ✓ Բացել ՄԻԱՎ և ՁԻԱՀ հապավումները,
- ✓ Որոնք են կանխարգելման ուղիները:

Կշռադատման փուլ, այս փուլում հանձնարարվում է կարճ թեստային աշխատանք:

Վերջում ուսուցիչը դասը ամփոփում է հարցերի միջոցով, որոնք պետք է ունենան, «այո» կամ «ոչ» պատասխանները: Աշակերտները հարցը լսելուն պես բարձրացնում են իրենց մոտ եղած քարտերը, որոնցից կապույր այո-ն է, դեղինը՝ ոչ-ը, իկ վերջում հիշեցվեց, որ դեկտեմբերի 1-ը ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն է:

Եզրակացություն

Ընդհանրացնելով հետազոտության ընթացքում բացահայտված հիմնական արդյունքները, գալիս ենք հետևյալ եզրահանգման.

Սովորողների գիտելիքների ձեռքբերման, ընդհանրացումներ կատարելու, վերլուծական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, բնության երևույթները ընկալելու և մեկնաբանելու կարողությունների զարգացման կարևոր նախադրյալ է դառնում ինտերակտիվ մեթոդների կիրառումը դպրոցում: Արդի մոտեցումները կնպաստեն սովորողներին գիտական ուսումնասիրություն կատարելու հմտությունների, փորձի արդյունքների վերլուծության ու ընդհանրացումներ կատարելու կարողությունների ձևավորմանը: Երբ տեսական գիտելիքներն ամրապնդվում են լաբորատոր և գործնական աշխատանքներով, աշակերտների մոտ հիմնավոր է դառնում ստացված գիտելիքը:

Ինտերակտիվ մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս աշակերտներին խմբային աշխատանքի միջոցով ամրապնդել ստացած գիտելիքները:

Հետազոտության ընթացքում հնարավորություն եմ ունեցել կիրառել տարբեր մեթոդներ՝ «սովետական դպրոցի» մեթոդներից, մինչև արդի մեթոդները: Այն դասերը, որոնք իրականացրել եմ ինտերակտիվ մեթոդներով, աշակերտների մոտ ավելի լավ է տպավորվել և գրավոր աշխատանք գրելիս ցուցաբերել են 90% արդյունք: Իսկ այն դասերը, որոնք եղել են ուսուցչի պատմելու և հաջորդ դասին աշակերտների վերապատմելու մեթոդով, գրավոր աշխատանքի ժամանակ արդյունավետությունը եղել է 40%: Աշակերտներն այս դեպքում ոչ թե հիմնավորապես սովորում ու հասկանում են դասը, այլ անգիր են անում, ինչն էլ շատ կարճ ժամանակ անց մոռանում են:

Ինտերակտիվ մեթոդները դեռ դպրոցում աշակերտներին նախապատրաստում են ԲՈՒՀ-ում սովորելուն, թիմային և անհատական աշխատանքներ կատարելուն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների առարկայական ծրագիր, էջ 1296-1319: www.mes.gov.ge/uploads/gegmebi/8.docx:
2. Համացանցային նյութեր,
3. Конюшко В. С., Павлюченко С. Е., Чубаро С. В., «Методика обучения биологии»; Минск, Книжный Дом, 2004. 256 с.
4. Յ. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, 2005թ.
5. Ս. Սիսակյան, Տ. Թանգամյան, Գ. Միրզոյան, Կենսաբանություն, Մարդ, Երևան 2014թ.
6. Ա. Գասպարյան, Է. Մելքոնյան Կենսաբանություն 2011թ.
7. Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ, Չարլզ Թեմփլ, Քննադատական մտածողության իթանման մեթոդները